

«Ֆինանսների նախարարություն»

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/1

31 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ի 14.07.2015 թ-ի դիմում-բողոքը ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.07.2015 թ-ի թիվ 5011195 ակտի դեմ:

«Ժակշին» ՍՊԸ-ի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ Ֆինանսների նախարարի 05.12.2014 թ.-ի թիվ 5011195 հանձնարարագրով «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ Ընկերություն) իրականացված բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգման արդյունքում 03.07.2015թ.-ին կազմվել է թիվ 5011195 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ակտի հետ ընկերությունը համաձայն չէ և ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ և 69-րդ հոդվածների, 70-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետի, 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի, 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի, «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն դիմում-բողոքով բողոքարկում է Ակտը ստորև ներկայացված հիմքերով.

Ակտում ամրագրված շահութահարկի մասով խախտման արձանագրումը, թե իբր Ընկերությունը հաստատագրված վճարի կետով արձանագրված ավտոտրանսպորտային միջոցների միջոցով պատվիրատուին մատուցած ծառայությունների մասով ընկերությանը համարելով հաստատագրված վճար վճարող՝ իր անունով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերով հաշվառված իրացման շրջանառությունները 2012թ.-ին տարեկան 4.080.000 դրամ, 2013թ.-ին տարեկան 6.249.500 դրամ գումարների չափով, հաշվառել է համապատասխան տարիների համախառն եկամտի գումարում որպես նվազեցվող եկամուտ, իսկ դրանց վերաբերվող անմիջական ծախսերը, համապատասխանաբար՝ 3.934.815 դրամ և 4.803.578 դրամ գումարների չափով որպես նվազեցվող ծախս՝ խախտելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածների պահանջները: Խախտման արդյունքում 2012 և 2013 թթ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկվող շահույթի գումարը պակաս է ցույց տրվել համապատասխանաբար 145.815 դրամ և 1.445.922 դրամ գումարների չափերով ... »:

Ավելացված արժեքի հարկի մասով խախտման արձանագրումը, թե իբր «Ընկերությունը հաստատագրված վճարի կետով արձանագրված ավտոտրանսպորտային միջոցների միջոցով պատվիրատուին մատուցված ծառայությունների մասով իրեն համարելով հաստատագրված վճար վճարող՝ նրա անունով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերով 2012թ.-ի II եռամսյակում՝ 1.280.000 դրամ, 2012թ.-ի III եռամսյակում՝ 1.600.000 դրամ, 2012թ. չորրորդ եռամսյակում՝ 1.200.000 դրամ, 2013թ.-ի երրորդ եռամսյակում՝ 1.798.000 դրամ, 2013թ.-ի չորրորդ եռամսյակում՝ 4.451.500 դրամ, գումարների չափով հաշվառված իրացման շրջանառությունների նկատմամբ չի հաշվարկել ԱԱՀ 20% դրույքաչափով, համապատասխանաբար՝ 256.000 դրամ, 320.000 դրամ, 240.000 դրամ, 359.600 դրամ, 890.300 դրամ գումարների չափով և դրանց ուղղակիորեն վերաբերող ձեռքբերումների մասով չի հաշվանցել ԱԱՀ 2012թ.-ի 2-րդ եռամսյակում՝ 16.848 դրամ, 2012թ.-ի 3-րդ եռամսյակում՝ 8.861 դրամ, 2013թ.-ի 4-րդ

եռամսյակում՝ 16.848 դրամ, 2012թ.-ի 3-րդ եռամսյակում՝ 8.861 դրամ, 2013թ.-ի 4-րդ եռամսյակում՝ 92.710 դրամ գումարների չափով: Խախտվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները: ...», փաստական և իրավական հիմնավորումներից զուրկ դատողություն է, ոչ մի առնչություն չունի իրականության հետ, քանզի Ընկերությունը տվյալ ժամանահակատվածում ենթակա էր հարկման պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին փոխարինող պարտադիր և անհատույց վճարով՝ հաստատագրված վճարով: Մասավորապես՝

- «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ն 2012-2013թթ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է ավտոտրանսպորտային գործունեություն: Ընկերությունը սեփականության իրավունքով իրեն պատկանող KAMAZ մակնիշի (հաշվառման համարանիշը՝ 707PP77, SU տեսակը՝ բեռնատար, թափքի տեսակը՝ բենզատար), KAMAZ մակնիշի (հաշվառման համարանիշը՝ 707 ZZ 77, SU տեսակը՝ բեռնատար, թափքի տեսակը՝ բենզատար), KRAZ մակնիշի (հաշվառման համարանիշը՝ 466 UL 24, SU տեսակը՝ բեռնատար, թափքի տեսակը՝ բենզատար) տրանսպորտային միջոցներով իրականացրել է առաքողներին պատկանող բեռների փոխադրումներ (բեռնափոխադրումներ) վերջիններիս կողմից մատնանշված վայր և դրանք հանձնել բեռների ստացման համար լիազորված անձանց:

- Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող KAMAZ մակնիշի 707PP77 հաշվառման համարանիշի, KAMAZ մակնիշի 707ZZ77 հաշվառման համարանիշի և KRAZ մակնիշի 466UL24 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցների տեսակը տեխնիկական և շահագործման տվյալների հիման վրա արտադրողը սահմանել է բեռնատար, իսկ թափքի տեսակը՝ բենզատար, ինչը հավաստվում է տրանսպորտային միջոցների հաշվառման թիվ H1540682, թիվ H1037571 և թիվ H1559716 վկայագրերով:

- Ընկերությունը, հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ հոդվածի 3-րդ մասի, 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի, 8-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ, 19-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ հոդվածների պահանջները, մինչև «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ոլորտում գործունեություն իրականացնելն (սկսելը) իր գտնվելու վայրի հարկային տեսչության մարմին է ներկայացրել հարկային տեսչության մարմնի կողմից սահմանված ձևի տեղեկություններ (հայտարարություն-հաշվարկ)՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ, ինչպես նաև վճարել է հաստատագրված վճարները յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 15-ը:

- Հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային և ուղղիչ գործակիցների վերաբերյալ տեղեկությունները հարկային տեսչություն ներկայացնելու համար բենզատար տրանսպորտային միջոցների տեսակի վերաբերյալ պարզաբանում ստանալու անհրաժեշտությունից ելնելով «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ն 26.06.2015թ. թիվ Գ/Հ-100 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության պետին, որին ի պատասխան ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության պետի պաշտոնակատարը 30.06/2015թ. թիվ 15901 գրությամբ հայտնել է, որ բենզատար թափքի տեսակ ունեցող տրանսպորտային միջոցների տեսակն է բեռնատար:

- «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի կողմից 27.02.2015թ. տրված թիվ 06/3-

ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) և (կամ) բեռնատար ավտոմեքենաներով իրականացվող փոխադրումները:

Բողոքում մեջբերվել են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի, 8-րդ հոդվածի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 40-րդ հոդվածի դրույթները:

Ընդհանրացնելով վերոգրյալն՝ ակնհայտ է դառնում, որ Ընկերության կողմից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ, 10-րդ հոդվածների, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի խախտման մասին որևէ խոսք լինել անգամ չի կարող, քանզի Ընկերությունը տվյալ ժամանակահատվածում սեփականության իրավունքով իրեն պատկանող բեռնատար մեքենաներով իրականացրել է ավտոտրանսպորտային գործունեություն, որը, համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետի դրույթների, հանդիսանում է հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ, որն էլ իր հերթին հաստատագրված վճար վճարողների կողմից պետական բյուջե վճարվող ավելացված արժեքի հարկին և (կամ) շահութահարկին փոխարինող պարտադիր և անհատույց վճար է:

Տվյալ դեպքում Ակտով անիրավաչափորեն հարկերի, տույժերի և տուգանքների վճարման պարտականություն է դրվել Ընկերության վրա վատթարացնելով վերջինիս իրավական և փաստացի դրությունը: Մասնավորապես՝ 03.07.2015թ.-ին կազմված թիվ 5011195 ակտով անիրավաչափորեն շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ:

Բողոքում մեջբերվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի, 7-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածների դրույթները:

Վերոնշյալ փաստերի և ՀՀ գործող օրենսդրության պահանջների համադրված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ 03.07.2015թ.-ին կազմված թիվ 5011195 Ակտը կազմելիս վարչական մարմինը չի հետևել օրենքների պահպանմանը, վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինը միայն ձևական պահանջների պահպանման նպատակով Ընկերությանը ծանրաբեռնել է պարտականություններով, անհավասար մոտեցում է ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, Ընկերությանը պահանջել է կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել էին Ընկերության կողմից այլ գործողությունների շրջանակներում, չեն պահպանել ստուգման հետ առնչվող՝ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, չեն պահպանվել տնտեսավարող սուբյեկտի՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու շահերը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ 03.07.2015թ.-ին կազմված ստուգման Ակտում ամրագրված խախտման արձանագրումը փաստական և իրավական հիմնավորումներից զուրկ դատողություն է, որի հիմնավորման համար ներկայացվել են բավարար հիմքեր, չի բխում հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջներից և վարչարարության հիմնարար սկզբունքներից, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ակտը ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում օրենքի սխալ կիրառման, սխալ մեկնաբանման հետևանքով, և ղեկավարվելով վերը նշված իրավանորմերի դրույթներով՝ ընկերությունը դիմում է հանձնաժողովին՝ բողոքը քննության առնելու և 03.07.2015թ.-ին կազմված թիվ 5011195 Ակտը շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով անվավեր ճանաչելու պահանջով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 05.12.2014 թ.-ի թիվ 5011195 հանձնարարագրի համաձայն «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 03.07.2015 թ-ի թիվ 5011195 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ):

Ընկերության բողոքը վերաբերվում է Ակտով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորություններին:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

ա) Ընկերությունը հաստատագրված վճարի կետով արձանագրված ավտոտրանսպորտային միջոցների միջոցով պատվիրատուին մատուցված ծառայությունների մասով իրեն համարելով հաստատագրված վճար վճարող՝ նրա անունով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերով հաշվառված իրացման շրջանառությունները 2012թ.-ին տարեկան 4.080.000 դրամ, 2013թ.-ին տարեկան 6.249.500 դրամ գումարների չափով, հաշվառել է համապատասխան տարիների համախառն եկամտի գումարում որպես նվազեցվող եկամուտ, իսկ դրանց վերաբերվող անմիջական ծախսերը (նյութական, աշխատավարձ, ամորտիզացիա, վարչական) համապատասխանաբար 3.934.815 դրամ, 4.803.578 դրամ գումարների չափով որպես նվազեցվող ծախս: Խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 7-րդ և 10-րդ հոդվածների պահանջները, այն է՝ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի՝ հաշվետու տարում հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարի և նույն օրենքով սահմանված նվազեցումների՝ եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի դրական տարբերությունն է:

բ) 2013 թ-ին շահութահարկի եռամսյակային նվազագույն վճարները վճարել է սահմանված ժամկետներից ուշ: Խախտվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Խախտման արդյունքում 2012 և 2013 թթ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկվող շահույթի գումարը պակաս է ցույց տրվել համապատասխանաբար 145.815 դրամ և 1.445.922 դրամ գումարների չափերով:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 835.852 դրամ:

Ակտի 4-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ընկերությունը հաստատագրված վճարի կետով արձանագրված ավտոտրանսպորտային միջոցների միջոցով պատվիրատուին մատուցված ծառայությունների մասով իրեն համարելով հաստատագրված վճար վճարող՝ նրա անունով դուրս գրված հաշվարկային փաստաթղթերով 2012թ.-ի 2-րդ եռամսյակում՝ 1.280.000 դրամ, 2012թ.-ի 3-րդ եռամսյակում՝ 1.600.000 դրամ, 2012թ.-ի 4-րդ եռամսյակում 1.200.000 դրամ, 2013թ.-ի 3-րդ եռամսյակում՝ 1.798.000 դրամ, 2013թ.-ի 4-րդ եռամսյակում՝ 4.451.500 դրամ, գումարների չափով հաշվառված իրացման շրջանառությունների նկատմամբ չի հաշվարկել ԱԱՀ 20% դրույքաչափով: Խախտվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի պահանջները, որի հետևանքով վերը նշված եռամսյակների համար

ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկներում բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները պակաս են ցույց տրվել ընդամենը 1.947.481 դրամի չափով:

Հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 4.182.216 դրամ:

Սույն գործին առնչվող փաստական հանգամանքների և ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եկավ հետևյալ եզրակացության.

2 «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն հաստատագրված վճարի հարկման օբյեկտ է համարվում ավտոտրանսպորտային գործունեությունը: Այդ գործունեությունից հաստատագրված վճարի չափի հաշվարկման առանձնահատկությունները, այդ թվում՝ հաստատագրված վճարի չափի որոշման կարգը, սահմանված են նշված օրենքի 5-րդ գլխով: Մասնավորապես, օրենքի համաձայն հաստատագրված վճարով հարկվում են ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) և (կամ) բեռնատար ավտոմեքենաներով իրականացվող փոխադրումները:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն գլխի դրույթների գործողությունը չի տարածվում այն հարկ վճարողների վրա, որոնք ավտոտրանսպորտային միջոցներն օգտագործում են բացառապես սեփական ներարտադրական (ներտնտեսական) փոխադրումների համար:

Հետևաբար, եթե տվյալ ավտոտրանսպորտային միջոցը տեխնիկական անձնագրով և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն տրված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրով համարվում է բեռնատար ավտոմեքենա, ապա բեռնատար ավտոմեքենայով իրականացվող փոխադրումների մասով կիրառելի են «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Վերոգրյալից հետևում է, բեռնատար համարվող ավտոմեքենայով իրականացվող ավտոտրանսպորտային գործունեությունը համարվում է հաստատագրված վճարով հարկվող օբյեկտ, իսկ ստուգմամբ ավտոտրանսպորտային գործունեությունը հարկման ընդհանուր կարգ տեղափոխելը և ԱԱՀ-ի ու շահութահարկի գծով պարտավորություններ առաջադրելը իրավաչափ է միայն հատուկ համարվող տրանսպորտային միջոցների (բետոնախառնիչի) մասով:

Միաժամանակ, ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացնող անձանց կողմից բերվեցին հետևյալ փաստարկները.

- ստուգվող ժամանակաշրջաններում առկա են հաշվետու ժամանակաշրջաններ, երբ նշված տրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների համար ներկայացվել են ԱԱՀ-ի հաշվարկներ և հարկերը հաշվարկվել են ընդհանուր սահմանված կարգով,

- ակտով արձանագրված խախտումներին ընկերությունը մասամբ համաձայն է (բետոնախառնիչի մասով, որը հանդիսանում է ոչ թե բեռնատար, այլ հատուկ տրանսպորտային միջոց):

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ ճշտել ստուգվող ժամանակահատվածում բեռնատար և հատուկ համարվող տրանսպորտային միջոցներով իրականացված ավտոտրանսպորտային գործունեության ընդհանուր հարկման կարգով կամ հաստատագրված վճարով հարկվող ժամանակահատվածների հարկային պարտավորությունները:

Ինչ վերաբերվում է Հանձնաժողովի իրավասությանը՝ բողոքի քննության արդյունքում վերստուգում նշանակելու վերաբերյալ, ապա այդ կապակցությամբ հարկ է մեջբերել հետևյալ իրավանորմների դրույթները.

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վերստուգումներ կարող են անցկացվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

...

ը) սույն օրենքի 11-րդ հոդվածի երրորդ կետով սահմանված դեպքում.»:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երրորդ կետի համաձայն. «Բողոքները վերադասության կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Սույն կետով սահմանված ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից»:

Իր հերթին, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2013 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 424-Ն հրամանով հաստատված «Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի աշխատակարգ»-ի 26-րդ կետի համաձայն. «Գանգատարկման հանձնաժողովը, դիմում-գանգատների քննարկման արդյունքում, իրավասու է միջնորդություն ներկայացնել կոմիտեի նախագահին՝

1) վերստուգման կամ հետքացթողումային (այդ թվում՝ կրկնակի) հսկողության գործընթաց սկսելու համար.»:

Վերոգրյալ իրավանորմերի դրույթներից հետևում է, որ Հանձնաժողովն իրավասու է հանդես գալ միջնորդությամբ «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարին «ԺԱԿՇԻՆ» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանում:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄՐԻՈՒՄՅԱՆ